

Հավելված
ՀՀ կառավարության 2022 թվականի
մայիսի 26-ի N 742-Ա որոշման

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ
ԿԱՏԱՐՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պետական գույքի կառավարման 2021-2023 թվականների ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) կատարման մասին սույն հաշվետվությունը (այսուհետ՝ հաշվետվություն) ներկայացվում է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 1-ի N 458-Լ որոշման 26-րդ կետի համաձայն:

2. Հաշվետվությունն ընդգրկում է 2021 թվականի օրացուցային տարին (այսուհետ՝ հաշվետու ժամանակաշրջան):

3. Հաշվետվությունը ներկայացվում է որպես հաշվետու ժամանակաշրջանում պետական գույքի կառավարման ոլորտում իրականացված միջոցառումների և դրանց արդյունքների ամփոփում:

4. Հաշվետու ժամանակաշրջանում իրականացված միջոցառումներն ուղղված են եղել ծրագրով սահմանված նպատակների իրագործմանը:

5. 2021 թվականի ընթացքում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կողմից (այսուհետ՝ կոմիտե) պետական գույքի կառավարման առանձին բնագավառներում իրականացվել են պետական գույքի կառավարման բարեփոխման աշխատանքներ, մասնավորապես՝ կոմիտեի կողմից 2021 թվականին մշակվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունվել են հետևյալ իրավական ակտերը՝

1) «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-30-Ն օրենքով մասնավորեցման ծրագրի ցանկում ընդգրկվել է «Հատուկ լեռնափրկարար ծառայություն» փակ բաժնետիրական ընկերությունը (ծածկագիր՝ 90124)։

2) Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացվել «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի կատարման 2020 թվականի հաշվետվության մասին» օրենքի նախագիծը։

3) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված համապատասխան որոշումների համաձայն՝ ներդրվել է պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման վիճակի վերլուծության և չօգտագործվող ու ոչ արդյունավետ օգտագործվող տարածքների բացահայտման գործուն համակարգ, կանոնակարգվել է ոչ միայն պետական մարմիններին ամրացված, պետական ոչ առևտրային կազմակերպությունների սեփականությունը հանդիսացող և դրանց օգտագործմանը հանձնված գույքի, այլ նաև պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատուց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի օտարման (վաճառքի) գործընթացը, վերացվել են պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու գործընթացում տեղ գտած թերությունները, համապատասխան իրավական ակտում փոփոխություն կատարելու արդյունքում՝ գույքի գնահատման գործընթացն իրականացվելու է ՀՀ օրենսդրությամբ նոր սահմանված պահանջներին համապատասխան, հավանության է արժանացել պետական գույքի կառավարման 2018-2020 թվականների ծրագրի կատարման 2020 թվականի տարեկան հաշվետվությունը, ինչպես նաև հաստատվել է պետական գույքի կառավարման 2021-2023 ծրագիրը։

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների ծրագրի «6.7 Պետական գույքի արդյունավետ կառավարում» բաժնում ընդգրկվել են պետական գույքի ոլորտին վերաբերող առաջարկությունները, մասնավորապես՝ «Պետական մարմինների տիրապետմանը և օգտագործմանը հանձնված (ամրացված)

կազմակերպություններին, ընկերություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող շարժական գույքի պահառության կարգը հաստատելու մասին», «Պետական սեփականություն հանդիսացող գույքի վաճառքի համար հավանական գնորդների կողմից ներկայացվող գործարար (ներդրումային) ծրագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին», «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի N 30-Լ հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանները:

II. ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

6. Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կառավարման համակարգի կատարելագործման, դրանց կողմից տնօրինվող գույքի օգտագործման արդյունավետության բարձրացման համար ծրագրով նախատեսվել էր հստակեցնել կազմակերպությունների գույքի կազմն ու կառուցվածքը և, միաժամանակ, օպտիմալացնել այդ կազմակերպությունների քանակը: Ինչի հետ կապված հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են կազմակերպությունների լուծարման, վերակազմակերպման և մասնավորեցման հետ կապված միջոցառումները:

7. Ծրագրի N 2 հավելվածի N 1՝ «Մասնավորեցման ծրագրում չընդգրկված՝ լուծարման առաջարկվող կազմակերպությունների» ցանկում ընդգրկված՝ «Պետական լոտո» ՓԲԸ-ն լուծարման գործընթացում է եղել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N 350-Ա որոշման համաձայն: Ընկերության լուծարման ավարտի վերաբերյալ պետական գրանցումը կատարվել է 2021 թվականի հոկտեմբերին:

8. Ծրագրի N 2 հավելվածի N 2՝ «Վերակազմակերպման առաջարկվող՝ պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերով (բաժնեմասերով) առևտրային կազմակերպությունների» ցանկով հաշվետու ժամանակահատվածում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի նոյեմբերի 17-ի N 1805-Ն որոշման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի՝ «Գյումրու ուռուցքաբանական

դիսպանսեր», «Գյումրու ծննդատուն» և «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ-ները միացման ձևով վերակազմակերպվել են «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 991-Ն որոշման համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ «Վարդենիսի պոլիկլինիկա» և «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպվել են «Վարդենիսի ԲԿ» փակ բաժնետիրական ընկերության: Վերակազմակերպումից հետո «Վարդենիսի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը վերանվանվել է «Վարդենիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1425-Ն որոշման հիմքով՝ ՀՀ Լոռու մարզպետարանի՝ «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն, Լ. Արեշյանի անվան «Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր» ՓԲԸ-ն և «Վանաձորի թիվ 2 հիվանդանոց» ՊՓԲԸ-ն 2021 թվականին վերակազմակերպվել են «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի:

9. Ծրագրի N 2 հավելվածի N 3՝ «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնվող՝ չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող պետական գույքի» ցանկով 2021 թվականին կատարվել են՝

1) ծրագրի N 1 հավելվածի 13-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ծրագրի N 2 հավելվածի N 3 ցանկում ներառված անշարժ գույքից կոմիտեի տնօրինությանն է հանձնվել թվով 6 գույք, 1 գույք՝ ՀՀ ֆինանսների նախարարության քաղ. Երևան, Կոմիտաս 54բ հասցեում գտնվող շենքից տարածքը կոմիտեից հետ է վերցվել և ամրացվել ՀՀ արդարադատության նախարարությանը, իսկ քաղ. Երևան, Մ. Սարյան փողոց 22 շենքի 12-րդ հարկում գտնվող թվով 81 անվանում շարժական գույքը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի

27-ի N 98-Ա որոշման, կոմիտեի տնօրինությանն է հանձնվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 2021 թվականի ապրիլի 26-ին: Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի տնօրինությանը հանձնվող՝ չօգտագործվող կամ ըստ նպատակային նշանակության չօգտագործվող կամ մասնակիորեն օգտագործվող պետական գույքի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է N 3 ցանկով.

2) ծրագրի N 1 հավելվածի 13-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 26-ի N 346-Ն որոշման N 1 հավելվածում ներառված անշարժ գույքից կոմիտեի տնօրինությանն է հանձնվել թվով 134 անվանում անշարժ գույք:

10. Հաշվետու ժամանակաշրջանում «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքով հաստատված N 1 հավելվածի ցանկում, այդ թվում՝ ծրագրի N 2 հավելվածի N 4՝ «Մասնավորեցման ծրագրում ընդգրկված՝ չմասնավորեցված (չլուծարված) առևտրային կազմակերպությունների և այլ օբյեկտների մասնավորեցման և /կամ լուծարման առաջարկելու ժամկետների» ցանկում ընդգրկված ընկերություններից.

1) մասնավորեցվել են հետևյալ ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը (բաժնեմասը)՝

ա. «Արաբկիր» բժշկական համալիր-երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ-ի 5,6 %-ով պետական բաժնեմասը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 125-Ա որոշմամբ առաջին անգամ ներկայացվել են մասնավորեցման գնահատված արժեքով՝ 574, 356.9 հազար հայկական դրամով, մասնավորեցումը չի կայացել: Երկրորդ անգամ բաժնեմասը ներկայացվել է մասնավորեցման գնահատված արժեքի 75 %-ով, մասնավորեցումը նույնպես չի կայացել: Երրորդ անգամ ընկերության պետական բաժնեմասը ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել է ընկերությանը՝ գնահատված արժեքի 50 %-ով՝ 287,178.4 հազար հայկական դրամով,

բ. «Ընդերքաբանի Արեգի տեղամաս» ՓԲԸ-ի 100 % պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 255-Ա որոշմամբ ընկերության բաժնետոմսերն առաջին անգամ ներկայացվել են մասնավորեցման աճուրդով՝ գնահատված արժեքով՝ 24,060.1 հազար հայկական դրամով, աճուրդը չի կայացել: Երկրորդ աճուրդը՝ գնահատված արժեքի 75 %, նույնպես չի կայացել: Երրորդ անգամ բաժնետոմսերը ներկայացվել են մասնավորեցման գնահատված արժեքի 50 %՝ 12,030.1 հազար հայկական դրամով, մասնավորեցումը կայացել է,

գ. «Ընդերքաբանի Աղբյուրակի տեղամաս» ՓԲԸ-ի 100 % պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մարտի 4-ի N 307-Ա որոշմամբ առաջին անգամ ներկայացվել են մասնավորեցման աճուրդով՝ գնահատված արժեքով՝ 63,676.4 հազար հայկական դրամով, աճուրդը չի կայացել: Երկրորդ անգամ բաժնետոմսերը ներկայացվել են մասնավորեցման գնահատված արժեքի 75 %-ով, աճուրդը նույնպես չի կայացել: Երրորդ անգամ բաժնետոմսերը ներկայացվել են մասնավորեցման գնահատված արժեքի 50 %-ով՝ 31,838.2 հազար հայկական դրամ արժեքով, մասնավորեցվել են 62,084.5 հազար հայկական դրամով.

2) հաշվետու ժամանակաշրջանում մասնավորեցման են ներկայացվել հետևյալ ընկերությունների պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը (բաժնեմասը)՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1982-Ա և 2021 թվականի ապրիլի 15-ի N 568-Ա որոշումների համաձայն՝ «Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի 100 % պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի մասնավորեցման նպատակով անցկացված 2 մրցույթները չեն կայացել՝ հայտ չլինելու պատճառով: Առաջին անգամ մրցույթով մասնավորեցման ներկայացնելու ժամանակ նվազագույն գին սահմանվել է բաժնետոմսերի գնահատված արժեքի 100 %-ը, իսկ երկրորդ մրցույթի ժամանակ՝ 75 %-ը: Ընկերության բաժնետոմսերը մասնավորեցման ներկայացնելու

նպատակով ներկայումս կրկին շրջանառության մեջ է դրվել մասնավորեցման մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 690-Ա որոշման համաձայն «Նևրոզների կլինիկա» ՓԲԸ-ի 100 % պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի վաճառքի 2021 թվականի հունիսի 24-ին անցկացված մրցույթը չի կայացել հայտ չլինելու պատճառով: Հիմք ընդունելով «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» օրենքի 24¹-րդ հոդվածի 2-րդ մասը՝ մշակվել և սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն էր ներկայացվել «Նևրոզների կլինիկա» ՓԲԸ-ի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը մասնավորեցնելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նոր նախագիծ: Լրացուցիչ քննարկելու նպատակով հանվել է Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2021 թվականի սեպտեմբերի 7-ի նիստի օրակարգից: ՀՀ վարչապետի 2021 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 02/16.4/39500-2021 հանձնարարականով՝ նախագիծը կրկին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը: Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2021 թվականի դեկտեմբերի 8-ի նիստի ժամանակ հանձնարարվել է ներկայացնել նախագծի լրամշակված տարբերակ՝ դրանում նախատեսելով, որ «Նևրոզների կլինիկա» ՓԲԸ-ի գույքը կառանձնացվի և օտարման նպատակով կհանձնվի կոմիտեին, իսկ ՓԲԸ-ի 100 %-ով պետական բաժնետոմսերը կհանձնվեն Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կառավարմանը՝ կատարելով ընկերության գործունեության ուղղությունների փոփոխություն: Շրջանառության մեջ է դրվել «Նևրոզների կլինիկա» փակ բաժնետիրական ընկերության պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը վերապահելու, ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու և գույք ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ,

գ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի N 663-Ա որոշման համաձայն «Գյուկոնդ» ԲԲԸ-ի պետական բաժնեմասի 2021 թվականի մայիսի 27-ին և հունիսի 15-ին անցկացված աճուրդները չեն կայացել՝ հայտեր չլինելու պատճառով: «Գյուկոնդ» ԲԲԸ-ի 30 % պետական բաժնեմասը մասնավորեցնելու մասին որոշման նախագիծը կրկին ներկայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը, սակայն մշտապես գործող Ֆինանսատնտեսական նախարարական կոմիտեի 2021 թվականի դեկտեմբերի 4-ի արձանագրության 4-րդ կետով հանձնարարվել է իրականացնել ընկերության հիմնական միջոցների նոր գնահատում:

11. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի N 98-Ա որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող և ֆինանսների նախարարության կառավարմանը հանձնված՝ «Արդյունաբերաշինարարական բանկ» ԲԲԸ-ի (Արդշինբանկ) 0.001327 %, «Հայաստանի էկոնոմիկայի զարգացման բանկ» ԲԲԸ-ի 0.008691 % և «Հայագրոբանկ» ԲԲԸ-ի 13,858161 % բաժնետոմսերի կառավարման լիազորությունները փոխանցվել են կոմիտեին:

12. Հաշվետու ժամանակաշրջանում օտարման է ներկայացվել 53 միավոր (այդ թվում՝ ծրագրի N 2 հավելվածի N 5 ցանկում ընդգրկված) անշարժ գույք, որից օտարվել է 9 միավոր անշարժ գույք, այդ թվում՝ ծրագրի N 2 հավելվածի N 5՝ «Մասնավորեցման ծրագրում չընդգրկված, օտարման առաջարկվող անշարժ գույքի և անշարժ գույքի, որի՝ պետությանը պատկանող գույքային իրավունքներն առաջարկվում է փոխանցել իրավաբանական ու ֆիզիկական անձանց» ցանկում ընդգրկված 2 միավոր անշարժ գույքը՝

1) ծրագրի N 2 հավելվածի N 5 ցանկում ընդգրկված 36 միավոր անշարժ գույքը, որն ամրացված է կոմիտեին, մեկ անգամից ավել ներկայացվել է օտարման և չի օտարվել գնորդ չլինելու պատճառով, քանի որ դրանք ըստ էության չունեն գրավչություն: Դրա մասին է վկայում այն փաստը, որ կոմիտեի պաշտոնական կայքում տեղադրվել է հայտարարություն՝ նշված գույքերի օտարմանը վերաբերող, սակայն մինչև օրս առաջարկություններ չեն ստացվել:

2) ծրագրի N 1 հավելվածի 18-րդ և 20-րդ կետերով սահմանված անշարժ գույքի օտարման վերաբերյալ միջոցառումների կատարողականի մասին տեղեկատվությունը ներկայացված է NN 1 և 2 ցանկերով:

13. Ծրագրի հավելված N 2-ի N 6՝ «Պետական գույքի վարձակալությունից սպասվելիք մուտքերի վերաբերյալ» ցանկով՝ 2021 թվականին պետական բյուջե Ծրագրով կանխատեսվող (սպասվելիք) դրամական մուտքերը սահմանվել են՝ 170,000.0 հազար հայկական դրամ, մինչդեռ, 2021 թվականին պետական բյուջե է մուտքագրվել՝ 318,805.1 հազար հայկական դրամ: Այլ կերպ, կատարողականը կազմել է 187 %:

14. Ծրագրի N 2 հավելվածի N 7՝ «Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների (այսուհետ՝ ալեհավաք) տեղակայման և սպասարկման վարձավճարների սպասվելիք (կանխատեսվող) մուտքերի վերաբերյալ» ցանկի նախատեսվածի կատարողականը հետևյալն է՝ ալեհավաքների տեղակայման և սպասարկման ծառայություններից վարձավճարները ծրագրով 2021 թվականի համար կանխատեսվող դրամական մուտքերը սահմանվել են 259,000.0 հազար հայկական դրամ, որից պետական բյուջե սպասվելիք դրամական մուտքերը՝ 73,000.0 հազար հայկական դրամ, մինչդեռ, 2021 թվականին այն կազմել է 272,045.6 հազար հայկական դրամ, որից պետական բյուջե փոխանցվել է 81,388.5 հազար հայկական դրամ՝ գանձապետական 900005220919 հաշվին մուտքագրվել է 66,858.4 հազար դրամ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության 900005220125 գանձապետական հաշվին՝ 4,778.4 հազար դրամ, ՀՀ ոստիկանության ծառայության 900005022018 գանձապետական հաշվին՝ 7,040.4 հազար դրամ և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի 900013574018 հաշվին՝ 2,711.4 հազար դրամ: Այլ կերպ, կատարողականը կազմել է համապատասխանաբար՝ 105 % և 111.5 %:

15. Ծրագրի N 2 հավելվածի N 8՝ «Մասնավորեցված, օտարված, նվիրաբերված, վարձակալությամբ, ինչպես նաև անհատույց օգտագործման իրավունքով տրված օբյեկտների գնորդների, նվիրառուների, վարձակալների և օգտագործողների կողմից ծրագրային ժամանակահատվածի ընթացքում ստանձնած ներդրումային պարտավորությունները»

ցանկում ընդգրկված, գնորդների կողմից պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է N 4 ցանկով:

16. Հաշվետու ժամանակահատվածում 4 գնորդների կողմից կնքվել և 2021 թվականին ստանձնվել են հետևյալ ներդրումային պարտավորությունները՝

1) վարձակալության պայմանագրով 1 գնորդ ստանձնել է 10,800.00 հազար հայկական դրամի ներդրումային պարտավորություն, կատարել է 13,788.00 հազար հայկական դրամի: Սակայն, ժամկետից ուշ նշված պարտավորության կատարման համար հաշվարկվել է նաև տուգանք՝ 2,160.00 հազար հայկական դրամի չափով.

2) նվիրաբերության պայմանագրերով ներդրումային պարտավորություններ է ստանձնել 2 գնորդ՝ յուրաքանչյուրը 150,000.00 հազար հայկական դրամի չափով:

17. Ծրագրի N 3 հավելվածի ցանկում ընդգրկված կազմակերպությունների տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերլուծության հետ կապված՝ ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1262-Ն որոշմամբ (այսուհետ՝ որոշում) հաստատված կարգի համաձայն իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1) որոշման N 1 հավելվածի համաձայն կոմիտեի կողմից 2021 թվականի առաջին կիսամյակի տվյալների հիման վրա իրականացվել են 50 % և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական դիտարկումներ թվով 21-ի՝ ՀՀ կառավարության, ՀՀ նախարարությունների, դրանց ենթակա մարմինների, ՀՀ մարզպետարանների, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի և ՀՀ հանրային հեռարձակող խորհրդի ենթակայության ընդհանուր թվով 136 պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունից՝ թվով 134-ի համար՝

ա. կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ վերլուծության ենթարկված 134 ընկերություններից 98-ը (73,14 %) աշխատել է շահույթով, 33 ընկերություն (24,62 %) աշխատել է վնասով, իսկ 3 ընկերություն (2,24 %) շահույթ (վնաս) չի ձևավորել, այլ կերպ՝ գործունեություն չի ծավալել,

բ. ընկերությունների 2021 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքում ձևավորվել է 877,893.1 հազար հայկական դրամի վնաս, որում զգալի մաս են

կազմում ՀՀ առողջապահության նախարարության ընկերությունները՝ 134,764.1 հազար հայկական դրամ, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ընկերությունները՝ 174,472.1 հազար հայկական դրամ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընկերությունները՝ 328,617.5 հազար հայկական դրամ, ՀՀ պաշտպանության նախարարության ընկերությունները՝ 154,962.7 հազար հայկական դրամ,

գ) 2021 թվականի առաջին կիսամյակի տվյալներով ընկերությունների զուտ շահույթի ընդհանուր ծավալը կազմել է 27,783,250.4 հազար հայկական դրամ, որտեղ գերակիշռ մաս են կազմում ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ընկերությունները՝ 23,485,889.0 հազար հայկական դրամ, ՀՀ հանրային հեռարձակողի խորհրդի ընկերությունները՝ 529,889.0 հազար հայկական դրամ, ՀՀ առողջապահության նախարարության ընկերությունները՝ 480,205.9 հազար հայկական դրամ: Հարկ է նշել, որ ճշգրիտ պատկեր հնարավոր է ունենալ տարեկան տվյալների ամփոփման ժամանակ,

դ. 2021 թվականի առաջին կիսամյակում ընկերությունների արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթը կազմել է 89,994,344.3 հազար հայկական դրամ (2020 թվականի առաջին կիսամյակում այն կազմել էր 98,875, 835.0 հազար հայկական դրամ),

ե. աշխատակիցների թիվը կազմել է 20454 մարդ,

զ. վերլուծության արդյունքներն ամփոփ տեղեկանքների տեսքով ներկայացվել են ՀՀ վարչապետին և ՀՀ ֆինանսների նախարարություն.

2) որոշման N 4 հավելվածի համաձայն՝ 2020 թվականից իրականացվել են կազմակերպությունների գործունեության արդյունավետության որոշում, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքի գնահատում: Արդյունքում, համապատասխան առաջարկություններ են ուղարկվել կազմակերպությունների կառավարումն իրականացնող լիազոր մարմիններ:

18. Ծրագրում ընդգրկված պետական գույքի մասնավորեցման գործարքների իրականացման արդյունքում դրամական մուտքերը 2021 թվականին կազմել են՝ 407,547.4 հազար հայկական դրամ, այդ թվում՝ պետական բյուջե՝ 294,565.9 հազար հայկական դրամ, համայնքային բյուջե՝ 112,981.5 հազար հայկական դրամ:

19. Հաշվետու ժամանակաշրջանում պետական անշարժ գույքի օտարումից մուտքերը հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 884,181.6 հազար հայկական դրամ, որից՝ պետական բյուջե՝ 678,629.4 հազար հայկական դրամ, համայնքային բյուջե՝ 205,552.2 հազար հայկական դրամ:

20. Բնակչության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման և կացարանով ապահովման ուղղությամբ կոմիտեի կողմից իրականացվում է պետական սեփականություն համարվող հանրակացարանային բնակելի տարածքների նվիրատվության և սեփականաշնորհման գործընթացը, որի նպատակն է բնակչության բնակարանային պայմանների բարելավումը և, սեփականության իրավունքի հաստատումով, սոցիալական և կենցաղային խնդիրների լուծումը: Այսպես, հաշվետու ժամանակահատվածում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 404 որոշման պահանջների համաձայն՝ կոմիտեի կողմից մշակվել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել են «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձանց կողմից զբաղեցրած բնակելի տարածքները սեփականաշնորհելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության թվով 2 որոշման նախագծերը, որոնցով առաջարկվում է թվով 3 բնակելի տարածքներ սեփականաշնորհել այնտեղ բնակվող 3 ընտանիքների (9 անձանց):

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման պահանջների համաձայն՝ կոմիտեի կողմից նախապատրաստվել և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունվել են Հայաստանի Հանրապետության կառավարության թվով 5 որոշման նախագծեր, որոնցով առաջարկվում է նվիրատվությամբ տրամադրել 102 բնակելի տարածքներ՝ 96 ընտանիքների (281 անձանց):

Ց Ա Ն Կ N 1

ՄԱՍՆԱՎՈՐԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ, ՕՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ, ՈՐԻ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՓՈԽԱՆՑԵԼ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

NN ը/կ	Գույքի անվանումը	Գտնվելու վայրը	Մակերեսը (քառ. մետր)	Հանրապետական գործադիր մարմնի անվանումը	Ծանոթություն
1	2	3	4	5	6
1.	Տարածք	ք. Երևան, Նոր Նորք, Մոլորովական փող., 29/4 շենք, 1/5	36.2	Պետական գույքի կառավարման կոմիտե	
2	Տարածք	ք. Երևան, Նոր Նորք, Մոլորովական փող., 29/5 շենք, 1/8	50.1	Պետական գույքի կառավարման կոմիտե	
3.	Տարածք	ք. Երևան, Նոր Նորք, Մոլորովական փող., 29/5 շենք, 1/9	67.9	Պետական գույքի կառավարման կոմիտե	Օտարման նախապատրաստման փուլում է:
4.	Երկաթուղու արտադրական համալիր	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Բյուրեղավան, Օղակաձև փ., թիվ 4/2	707.85 85.0 7.7	Պետական գույքի կառավարման կոմիտե	
5.	Բենզինի պահեստ	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին կայարան	45.2	Պետական գույքի կառավարման կոմիտե	
6.	Շենք	ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիր, Գրիբոյեդովի թաղամաս 4	281.9	Պետական գույքի կառավարման կոմիտե	
7.	Վարչական շենք Ավտոտնակ	ք. Ապարան, Գայի փողոց	413.44	Պետական գույքի կառավարման կոմիտե	
8.	Շենք, շինություններ	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Հրազդան, Պետրոս Դուրյան փողոց	618.67 49.5	Պետական գույքի կառավարման կոմիտե	

9.	Վարչական շենք	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Ռոմանի փողոց թիվ 98/1	250.1	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2130-Ա որոշմամբ նախատեսվում է ամրացնել ՀՀ արդարադատության նախարարությանը:
10.	Աշտարակի նախկին բժշկական կենտրոնի հիմնական մասնաշենք	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Նարեկացու փողոց	1793.3	Պետական գույքի կառավարման կոմիտե	Օտարման նախապատրաստման փուլում է:
11.	Նախկին հիվանդանոցի շենք	ՀՀ Գեղարքունիքի մարզ, Ճամբարակ համայնք, Տիգրան Մեծի փողոց 17/3	2120.9	Պետական գույքի կառավարման կոմիտե	
12.	Բացվածք (տարածք)	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Սայաթ-Նովա 7/3	233.1 22.2 /ընդհ. օգտ. տարածք/	Պետական գույքի կառավարման կոմիտե	
13.	Ոչ բնակելի տարածք	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 3/9-55	32.4	Պետական գույքի կառավարման կոմիտե	
14.	Տարածք	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս 3/10-51	307.8	Պետական գույքի կառավարման կոմիտե	
15.	Ավերակ	ՀՀ Արագածոտնի մարզ, Վարդենուտ համայնք, 1 փողոց, 31/2	354.44	Պետական գույքի կառավարման կոմիտե	
16.	Ռեստորանի շենք	ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Զերմուկ	975	Պետական գույքի կառավարման կոմիտե	

17.	Վարչական շենք	ՀՀ Արմավիրի մարզ, համայնք Ջարթոնք, 4-րդ փողոց 57	753.74	Պետական գույքի կառավարման կոմիտե	
18.	Ամբուլատորիա	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Սանահին կայարան	136.6	Պետական գույքի կառավարման կոմիտե	Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 31.07.2020 թ. N 123-Ա հրամանով աճուրդով ներկայացվել է օտարման, օտարվել է 2021 թվականին:
19.	Ոչ բնակելի տարածք	ք. Երևան, Ե. Քոչարի 5 շ., 69 շինություն	115.1	Պետական գույքի կառավարման կոմիտե	
20.	Նախկին փորձագիտական մասնաշենք	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս, 4-րդ փ., թիվ 2 շինություն	351.6	Պետական գույքի կառավարման կոմիտե	Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 13.08.2020 թ. N 129-Ա հրամանի համաձայն ներկայացվել է օտարման, աճուրդը կայացել է 15.12.2020 թ.-ին (օտարման դիմաց վճարումը կատարվել է 2021 թ.-ին):
21.	Նախկին մանրէների անվանադրման կենտրոն	ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Արզնի խճ.	7 451.05	Պետական գույքի կառավարման կոմիտե	Օտարման նախապատրաստման փուլում է:
22.	Նախկին ծննդատան շենք	ՀՀ Արաջատի մարզ, ք. Արտաշատ, Օգոստոսի փ. 23	7 179.9	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ կառավարության 16.07.2020 թ. N 1194-Ա որոշմամբ աճուրդով ներկայացվել է օտարման, չի օտարվել:
23.	Քուլեջի շենք, շինություններ	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Գորկու փ., թ. 3	1 865.28	Պետական գույքի կառավարման կոմիտե	
24.	Հրշեջ կայան	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Զիվանու փ., թիվ 64	1 330.78	Պետական գույքի կառավարման կոմիտե	

25.	Կաթսայատուն, ավտոտնակ	ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Զիվանու փ., թիվ 64/1	125.11	Պետական գույքի կառավարման կոմիտե	
26.	Հատուկ լեռնափրկարար ծառայության նախկին տարածք	ք. Երևան, Գ. Գյուլբենկյան փ., թիվ 29 շ., հ. 25	1 050.9	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ կառավարության 24.09.2021 թ. N 1551-Ա որոշմամբ նշված տարածքն ամրացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալա- կան հարցերի նախարա- րությանը՝ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության Արաբկիրի տարածքային կենտրոն (համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն) ստեղծելու նպատակով:
27.	Դպրոցի շենք, շինություններ	ՀՀ Արմավիրի մարզ, Այգեկ համայնք	725.7	Պետական գույքի կառավարման կոմիտե	Օտարման նախապատրաստման փուլում է:
28.	Հողամաս	ք. Երևան, Հրազդանի կիրճ, խճ. 2/3	0.041632 հա հողամաս	Պետական գույքի կառավարման կոմիտե	Օտարման նախապատրաստման փուլում է:
29.	Շենք, շինություններ	ք. Երևան, Հրազդանի կիրճ, խճ. 2/4	741.5		
30.	Հիվանդանոցի շենք, շինություններ	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Հիվանդանոցային փ., 1/1/2	1581.6	Պետական գույքի կառավարման կոմիտե	Ներկայումս փակ ընթացակարգով շրջանառվում է ՀՀ կառավարության համապատասխան որոշման նախագիծ:
31.	Հիվանդանոցի շենք, շինություններ	ՀՀ Սյունիքի մարզ, ք. Ագարակ, Հիվանդանոցային փ., 1/2	637.4	Պետական գույքի կառավարման կոմիտե	

32.	Պոլիկլինիկայի շենքի մի հատված	ք. Երևան, Ազատամարտիկների պողոտա, 82/2 շենք 1 շինություն	1 174.8	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ կառավարության 13.05.2021 թ. N 770-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման՝ աճուրդով:
33.	Ոչ բնակելի տարածք (կիսանկուղ)	ք. Երևան, Մաշտոցի պ., 9 շ., թիվ 32	128		
34.	Շենք, շինություններ	ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Գ. Գագարին, Գործարանային փ. 4	1 008.51	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ կառավարության 23.04.2020 թ. N626-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման՝ աճուրդով, չի օտարվել:
35.	«Լուսանշան» ՊՈԱԿ-ի նախկին գրասենյակ	ք. Երևան, Սեբաստիայի փող, թիվ 7	135.9	Պետական գույքի կառավարման կոմիտե	
36.	Հիվանդանոցի նախկին ծննդատան շենք	ՀՀ Լոռու մարզ, ք. Ալավերդի, Շահումյան 2	2 099.4	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ կառավարության 23.04.2020 թ. N 626-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման՝ աճուրդով, չի օտարվել:
37.	Ոստիկանության նախկին տարածք	ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնք, Զրառատ թաղամաս	5392.78	Պետական գույքի կառավարման կոմիտե	
38.	Շենք, շինություններ	ք. Երևան, Նորք-Մարաշ, Նորքի այգիներ 180	2018.12	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ կառավարության 09.04.2021 թ. N 671-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման՝ աճուրդով, չի օտարվել: Ներկայումս կրկին օտարման նախապատրաստման փուլում է:

Ց Ա Ն Կ N 2

ԾՐԱԳՐՈՒՄ ՉԸՆԴԳՐԿՎԱԾ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ ՕՏԱՐՄԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՅԼ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

NN ը/կ	Պետական կառավարման մարմնի անվանումը	Գույքի հասցեն, անվանումը	Մակերեսը (քառ. մետր)	Ծանոթություն
1.	2	3	4	5
1.	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ Սյունիքի մարզ, Գորիս համայնք, ք. Գորիս Մ-2 մայրուղի թիվ 7 հասցեում գտնվող Ճանապարհային տնակ	97.5	Պետական գույքի կառավար- ման կոմիտեի նախագահի 13.08.2020 թ. N 129-Ա հրամանով ներկայացվել է օտարման աճուրդով՝ օտարվել է 2021 թվականին:
2.	Պետական գույքի կառավարման կոմիտե	ք. Երևան, Ծ. Իսակովի պողոտա 13/12 հասցեում գտնվող անշարժ գույք	360.29	ՀՀ կառավարության 11.02.2021 թ. N 174-Ա որոշմամբ ներայացվել է օտարման՝ ուղղակի վաճառքի ձևով:
3.	Պետական գույքի կառավարման կոմիտե	ք. Երևան, Էրեբունի, Վարդաշենի 3-րդ փողոց 3 շենք, 26 բնակարան	19.7	Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 17.05.2021 թ. N 127-Ա հրամանով ուղղակի վաճառքի ձևով ներկայացվել է օտարման, սակայն գնորդի կողմից սահմանված Ժամկետում վճարումները չեն կատարվել:
4.	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ Տավուշի մարզ, Արծվաբերդ համայնք, 13 փողոց 12/2 հասցեում գտնվող կաթսայատուն	74.62	Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 25.05.2021թ. N143-Ա հրամանով ներկայացվել է օտարման՝ աճուրդով, օտարվել է:
5.	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ Լոռու մարզ, Դսեղ համայնք 17-րդ փողոց 1/1 հասցեում գտնվող կաթսայատուն	60	Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 25.05.2021 թ.

				N 143-Ա հրամանով ներկայացվել է օտարման՝ աճուրդով, օտարվել է:
6.	ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	ՀՀ Վայոց ձորի մարզ, ք. Եղեգնաձոր, Նարեկացու փողոց 8 հասցեում գտնվող անշարժ գույք	181.3	Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 31.05.2021 թ. N 156-Ա հրամանով ուղղակի վաճառքի ձևով ներկայացվել է օտարման:
7.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակ, Երևանյան փողոց N 103 հասցեում գտնվող շենք-շինություններ	951.4	ՀՀ կառավարության 27.08.2021 թ. N 1386-Ա որոշմամբ ներկայացվել է օտարման՝ աճուրդով, օտարվել է:
8.	Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին	ՀՀ Շիրակի մարզ, Մարալիկ համայնք, Հր. Շահինյան փողոց 1-ին նրբանցք թիվ 8 հասցեում գտնվող շենք-շինություններ	599.33	Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 02.06.2021 թ. N 159-Ա հրամանով ներկայացվել է օտարման աճուրդով, օտարվել է:
9.	Պետական գույքի կառավարման կոմիտե	ՀՀ Կոտայքի մարզ, Մայակովսկի համայնքում գտնվող անասնաբուժարան	202.5	Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի 06.07.2021 թ. N 207-Ա հրամանով ներկայացվել է օտարման աճուրդով, օտարվել է:
10.	Պետական գույքի կառավարման կոմիտե	ք. Երևան, Թամանցիների փողոց 73 հասցեում գտնվող շենք-շինություններ	3439.9	ՀՀ կառավարության 22.07.2021 թ. N 1204-Ա որոշմամբ ուղղակի վաճառքի ձևով ներկայացվել է օտարման:
